

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
NATIONAL ACADEMY OF SCIENCES  
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
YEREVAN STATE UNIVERSITY

ՀԵՐԱՅԻ ՏՈՒՐՅԱԿ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ  
ԵՎ ՉԱՐԳԼՕՄԱԿ ՀԵՌԱԿԱՐՄԵՐԸ  
ARMENIAN STUDIES TODAY  
AND DEVELOPMENT  
PERSPECTIVES

Միջազգային համաժողով  
Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003 թ.  
International Congress  
Yerevan, September 15-20, 2003



Ձեկուցումների ժողովածու  
Collection of papers



## ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

*Լևոն Եզեկյան  
Հայաստան*

90-ական թվականներից հասարակական, քաղաքական, գիտամշակութային կյանքում տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով զգալի տեղաշարժեր նկատվեցին նաև գրական արևելահայերենի բառապաշարի ոլորտում: Գրական լեզվի բառապաշարի տեղաշարժերը և նրանց զարգացման միտումներն ավելի ակնհայտ են դառնում՝ վերջին տարիներին լույս տեսած հայերենի բացատրական բառարանների և Նոր բացատրական բառարանի (հեղինակներ՝ պրոֆ. պրոֆ. Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան և ուր., առաջին հատորն արդեն տպագրվել է) քարտարանի բառային կազմը զուգադրելիս:

Այսպես՝ ակադ. Է. Բ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը» (ԱՅԲԲ, Երևան, 1976) պարունակում է շուրջ 147 հազար բառ և դարձվածաբանական միավոր, իսկ 1969-81 թվականներին տպագրված ԳԱ Լեզվի ինստիտուտի քառահատոր բառարանը՝ ավելի քան 100 հազար: ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի կողմից արդեն իսկ հիշատակված Նոր բացատրական բառարանի քարտարանի տվյալներով գրական արևելահայերենի բառապաշարը հասնում է շուրջ 250 հազարի:

Ուշագրավն այն է, որ Էդ. Աղայանի նշված բառարանի բառապաշարի շուրջ 20 տոկոսը՝ որպես հնացած կամ այլևս չօգտագործվող բառեր ու օտարաբանություններ, արդեն իսկ գործածությունից դուրս են մնացել և դրանց փոխարեն բառարանում ավելացել են տասնյակ հազարավոր նոր բառեր:

Արդ, զարգացման ինչ ուղիներ ու միտումներ են նկատվում արդի գրական արևելահայերենի բառապաշարում:

1. Փոխառյալ և օտարաբան բառերի հայերենացում մեր լեզվի ներքին, բառակազմական միջոցներով (բարդություն, ածանցում, հապավում):

Այս հարցում մեր առջև ծառանում են երկու՝ իրար անհարիր մոտեցումներ՝ անհարկի օտարամետություն և ծայրահեղ մաքրամոլություն, որոնք երկուսն էլ հավասարապես մերժելի են և մեզ համար անընդունելի:

Հայտնի է, որ արևելահայերենի բառապաշարի հարստացման գործում վերջին հարյուրամյակում հիմնական դերը պատկանել է ռուսաց լեզվին, որը բառապաշարի առումով հիմնական փոխառու լեզուն էր մինչև 90-ական թվականները ինչպես անմիջական, այնպես էլ և միջնորդավորված եղանակով: Ռուսաց լեզուն անվերապահորեն ոչ միայն կարևոր աղբյուր է եղել մեր գրական լեզվի բառապաշարի հարստացման ու զարգացման, այլև հիմնական օղակ՝ այլ լեզուներից անհրաժեշտաբար կատարվող փոխառությունների համար: Սակայն միշտ չէ, որ մեզանում բոլորի կողմից այս հանգամանքը ճիշտ է գիտակցվել և հաճախ մերժվել է ամեն մի փոխառություն և առաջարկվել անխտիր թարգմանել բոլոր օտար բառերը՝ անկախ

նրանց կիրառության ոլորտից և անհրաժեշտությունից:

Հենց նման մոտեցումն էլ ծայրահեղ մաքրամոլության դրսևորում է, որի դեմ միշտ էլ անհաշտ պայքար է մղվել: Դեռևս իր ժամանակին ականավոր հայագետ Հր. Ա-ճառյանը նշել է. «Այն բոլոր բառերը, սկսած ֆոսֆորից կամ ազոտից մինչև նորելուկ ստրեպտոցիդը և պենիցիլինը ամեն ինչ մեզ հայտնի է դառնում միմիայն ռուս աղբյուրների միջոցով: Ի՞նչ միտք ունի թարգմանել կամ աշխատել թարգմանել շոկոլադը, վիտամինը, կակաոն, քլորը, արդուզարդի պուդրան, կրեմը, լակը և այլն»: Բայց և նույնքան մերժելի և դատապարտելի է լեզուն անհարկի, ավելորդ օտար բառերով խճողելը, մի իրողություն, որ հայ իրականության մեջ բավականին տարածված ու ամրագրված էր մինչև 90-ական թվականները:

Փոխառությունների հարցում պետք է կիրառել ճիշտ ու լրջմիտ մոտեցում, բառաշինական և բառակերտական խելամիտ քաղաքականության այն սկզբունքով, որ բառապաշարի մեջ ընդգրկվեն պիտանի, անհրաժեշտ, անթարգմանելի և դրանով իսկ լեզուն չխճողվի անհարկի, ավելորդ օտարաբանություններով: Ինչպես իր ժամանակին նկատել է Դ. Աղայանը. «Ծայրահեղ մաքրասիրությունը օտարամոլության չափ արհամարհելի է»:

Տարիներ շարունակ մեր լեզվի բառապաշարում հաջողությամբ գործածվել են կուլտուրա, տենդենց, պրոցես, ֆունկցիա, տրադիցիա, դիսերտացիա, միտինգ, տուրիստ և բազմաթիվ այլ բառեր ու արտահայտություններ՝ իրենց համապատասխան բառաբարդումներով՝ որպես փոխառություններ: Բայց հետագայում լեզվի զարգացման բնականոն ընթացքում դրանք աստիճանաբար փոխարինվեցին հայերենի համարժեք ձևերով, և նշված բառերն արդեն դարձան օտարաբանություններ և դուրս եկան գործածությունից: Այս իրողությունը լեզվի բառապաշարի զարգացման սովորական, բնականոն գործընթաց է, երբ փոխառությունները լեզվի զարգացման որևէ փուլում աստիճանաբար փոխարինվում են տվյալ լեզվի համարժեք ազգային ձևերով և արդեն իսկ դառնում օտարաբանություններ և գործածությունից դուրս մղվում: Բայց այսօր մեր լեզվում կան բազմաթիվ փոխառություններ, որոնք դեռևս չունեն իրենց համարժեք ազգային ձևերը, ուստի և անհրաժեշտ բառեր են, և բնականաբար մնում են գործածության մեջ և դրանց արհեստական, շինծու թարգմանությունները հանրության կողմից ընդունելի չեն, ինչպես՝ ռեկտոր, դեկան, ֆակուլտետ, պրոֆեսոր, դոցենտ, ակադեմիա, քիմիա, ֆիզիկա, տրամվայ, տրոլեյբուս և այլն: Նման մոտեցում հատկապես ցուցաբերում են մեր սփյուռքահայ առանձին մտավորականներ ու գործիչներ, երբ փորձում են թարգմանել քիմիան (տարրաբանություն), կապիտալը (դրամագլուխ), այդ դեպքում կապիտալիզմն ու կապիտալիստականը ինչպե՞ս թարգմանենք, ռադիոն (ձայնասփյուռ), տերմինը (եզր) և այլն:

Տարիներ շարունակ որքան էլ փորձում ենք հաղորդակցման ժամանակ ամրագրել *լուիկ, սմբուկ, ստեպդին* բառերը, բայց միևնույն է՝ առայժմ ոչինչ չի ստացվում, քանի որ դրանք մինչև հիմա ժողովրդի, հանրության կողմից չեն ընդունվում և դրանք ընդհանրապես լայն գործածություն չունեն:

Գրական լեզվի բառապաշարի համակարգում զգալիորեն համալրվում են նաև ռուսերենի և ռուսերենի միջնորդությամբ այլ օտար լեզուներից կատարված բազմաթիվ պատճենումներն ու կիսապատճենումները, ինչպես՝ ինքնորոշում, վերակառուցում, ստորաբաժանում, ռադիոհաղորդում, պետավտոտեսչություն, պետբանկ, սանհանգույց, քիմմաքրում և այլն:

Գրական արևելահայերենի բառապաշարի հարստացման հաջորդ կարևոր աղբյուրը արևմտահայ գրական լեզուն է: Որքան էլ արձանագրենք, որ բառապաշարը հայերենի երկու տարբերակներում հիմնականում նույնն է, այնուամենայնիվ նրանց իմաստային, կառուցվածքային և ձևական տարբերությունները որոշակիորեն ակնհայտ են և պայմանավորված են լեզվական և արտալեզվական մի շարք գործոններով:

Այստեղ կարևոր դեր են խաղում գրաբարից և տարբեր բարբառներից օգտվելու և դրանց վրա խարսխվելու, այլ լեզուներից տարբեր չափերով ու մոտեցումներով փոխառություններ կատարելու, ինչպես նաև առանձին բառեր տարբեր իմաստներով գործածելու և նման բազմաթիվ այլ իրողություններ:

Այսօր արևելահայերենի բառապաշարում լայն կիրառություն ունեն արևմտահայերենից մուտք գործած՝ երեսփոխան, շարժանկար, երգահան, ատենախոս, ծայնասփյուռ, գործատու, տնօրեն, ատյան, այպանել, պլեհավաք, հեռացույց և նման հարյուրավոր բառեր: Որոշ լեզվաբանների կարծիքով, արևմտահայերենից անցած բառերի թիվը կազմում է 3-5 տոկոս (սա, անշուշտ, 140-150 հազար բառապաշարի դեպքում), մինչդեռ մեր իսկ մատնանշած նոր բացատրական բառարանում դրանց թիվը հասնում է 20 հազարի:

Վերջին ժամանակներս շատ է խոսվում մեր երկու գրական լեզուների մերձեցման մասին հատկապես Սփյուռքի մեր հայրենակիցների կողմից: Հանգամանորեն չանդարդառնալով այս խնդրին՝ նշենք միայն հետևյալը: Երկու լեզուների մերձեցումը (բայց ոչ ձուլումը) կա և կլինի հատկապես այսօրվա պայմաններում, երբ բավականին աշխուժացել են հասարակական, քաղաքական, մշակութային հարաբերությունները, ավելի տեսանելի ու գործուն են դարձել այս երկու հատվածների փոխադարձ կապերը, բայց և այնպես լեզուների այդ մերձեցման միտումներն ու հնարավորությունները պետք է տեսնել և իրականացնել ամենից առաջ և հատկապես բառապաշարի ոլորտում, քանի որ լեզվական մյուս մակարդակներում սա բավականին դժվար, երբեմն նույնիսկ անիրագործելի իրողություն է: Պետք է նկատի ունենալ, որ այս լեզուներից յուրաքանչյուրն ունի իր որոշակի և յուրահատուկ քերականական համակարգը ինչպես հնչյունական-արտասանական, այնպես և ձևաբանական, շարահյուսական ոլորտներում: Հենց թեկուզ միայն այն հանգամանքը, որ արևելահայ գրական լեզուն ունի եռաստիճան բաղաձայնական համակարգ, իսկ արևմտահայերենը՝ երկաստիճան՝ իրենց համապատասխան արտասանություններով, լուրջ և անհաղթահարելի դժվարություններ է դրսևորում գրական լեզվի երկու տարբերակների համար, էլ չենք խոսում ձևաբանական («ուն» և «կը» ճյուղեր) և շարահյուսական ակնհայտ տարբերությունների մասին: Մի կողմ թողնելով հարցի մանրամասն քննությունը, ավելացնենք նաև, որ մեզ համար անիմաստ, ոչ նպատակահարմար ու անընդունելի են ուղղագրության փոփոխության և միասնականացման մասին եղած բազմաթիվ հորջորջումներն ու ոչ գիտական մոտեցումները և գիտական, և պատմական, և՛ մանկավարժական-ուսուցողական, և հասարակական-քաղաքական տեսանկյունից, որի մասին բազմիցս նշվել է: Յուրաքանչյուր գրական լեզու ունի իր քերականական համակարգը, իսկ գրությունն այդ համակարգի բաղկացուցիչ և խիստ կարևոր բաղադրիչներից մեկն է: Եվ վերջապես՝ գրական արևելահայերենը ՀՀ պետական լեզուն է, նրա պաշտոնական, դիվանագիտական, վարչական, գործավարական, կրթական, մամուլի լեզուն՝ իր բոլոր մակարդակներով, այդ թվում և իր համապատասխան ուղղագրությամբ:

Ուստի և 1922 և ապա 1940 թվականների ուղղագրական բարեփոխումները մասնակի բացառություններով կատարվեցին հենց իր՝ Մ. Մաշտոցի սկզբունքային պահանջներին համապատասխան՝ գրել այնպես, ինչպես արտասանվում է:

Գիտության և տեխնիկայի առաջընթացը, հասարակական, քաղաքական կյանքի տարբեր իրադարձություններն ու փոփոխությունները, բնականաբար, ենթադրում են նոր հասկացությունների, նոր իրույթների համապատասխան անվանումներ: Այս առումով ևս արևելահայերենի բառապաշարում զգալի նորամուծություններ են նկատելի, որոնց մի մասը գրական լեզվի բառապաշար է անցնում որպես փոխառություններ, իսկ մյուսները թարգմանվում են հայերենի՝ համապատասխան բառակազմական միջոցներով: Նախկինում այս իրողությունը գերազանցապես ռու-

սերենից և ռուսերենի միջնորդությամբ էր, այժմ այս առաջավոր դերն անցնում է անգլերենին և մասամբ նաև եվրոպական այլ լեզուներին:

Ինչպես նկատել է էդ. Ադայանը, վերցվելով ռուսերենից, ինչպես և ուրիշ լեզուներից, փոխառյալ բառերը հայերենում ենթարկվում են մեր լեզվին հատուկ հնչյունական փոփոխություններին, հարմարեցվում հայերենի հնչյունական առանձնահատկություններին և, այսպես ասած, հայացվում են, իսկ հայերենն ընդհանրապես իր հնչյունական հարուստ համակարգով շատ հաճախ ավելի հարազատորեն է կարողանում արտահայտել փոխառյալ բառը՝ սկզբնաղբյուրին համապատասխանեցնելու տեսակետից:

Պետք է նկատել նաև, որ փոխառությունների մեծ մասը մեր լեզվի բառակազմական հարուստ և ճկուն միջոցների շնորհիվ հայացվում է: Վերջին ժամանակներս փոխառյալ «видео» արմատի համարժեք թարգմանության շնորհիվ հայերենում լայն գործածություն ստացան **տեսախցիկ, տեսաժապավեն, տեսահոլովակ, տեսավարձույթ, տեսաերիզ** և նման բազմաթիվ նորաբանություններ, «компьютер» արմատի շնորհիվ՝ համակարգիչ, համակարգչային, ինչպես նաև՝ տպիչ (պրինտեր), պնակիտ (դիսկետ) և այլն:

Նոր անվանումներ ի հայտ եկան հասարակական-քաղաքական ոլորտում, ինչպես՝ զագաթաժողով, ճեպագրույց, խոսնակ, հոչակագիր, այլախոս, բռնաշորթում և այլն: Ի դեպ, դեռևս անորոշ է և հստակեցված չէ «խոսնակ» բառի հիմնական, կոնկրետ բառային իմաստը. այն հաճախ գործ է ածվում բազմաթիվ և տարբեր իմաստներով (ինչպես՝ ազգային ժողովի խոսնակ, նախագահի խոսնակ, մամուլի խոսնակ և այլն): Որքան էլ արևելահայ գրական լեզուն ի վիճակի է և ունի բառերը հայացնելու մեծ հնարավորություններ, այնուամենայնիվ նկատելի են բազմաթիվ փոխառություններ, հատկապես եվրոպական լեզուներից, որոնք դեռևս չեն թարգմանվում և մեր լեզվում գործ են ածվում իբրև հարկավոր կամ անհրաժեշտ փոխառություններ, որոնց արհեստական հայացումը կարծում ենք, որ առայժմ այնքան էլ ցանկալի չէ: Այդ կարգի բառերից են՝ բիզնես, մարկետինգ, շուռ, սենդվիչ, պիցա, շոփ, բոուլինգ և այլն:

Փոխառությունների հետ սերտորեն առնչվում են նաև բառապատճենումները, երբ վերցվում են բառի արտահայտած հասկացությունն ու ներքին ձևը, այլ կերպ ասած՝ բառապատճենման դեպքում օտար բառը պարզապես թարգմանվում է փոխառու լեզվի բառերով կամ բարդությունների բաղադրիչներով: Նախկինում պատճենված երկաթուղի, ինքնաթիռ, ներգրել, ինքնագնաց և նման բառերի կողքին այսօր ունենք նաև՝ ոճույթ, շարույթ, բառույթ, պատճենահան, կարգավար և այլ բազմաթիվ ձևեր:

Բառապաշարի հարստացման գործում մեծ է անհատական հեղինակային նորակազմությունների դերը, որոնք հատկապես գործ են ածվում գեղարվեստական խոսքում՝ ոճական հատուկ նպատակներով: Բառապաշարի այս շերտը համալեզվական նորաբանություններից տարբերվում է նրանով, որ դրանք համեմատաբար սահմանափակ և հազվադեպ կիրառություն ունեն: Դրանցից շատերը հաջող կազմություններ են և արդեն իսկ գործ են ածվում ոչ միայն գեղարվեստական գրականության մեջ, այլև գրական և խոսակցական լեզվի տարբեր ոլորտներում: Գրական լեզվի բառապաշարում արդեն իսկ լայն կիրառություն են գտել Ե. Չարենցի կերտած՝ անիդ, հեզաճկուն, ողբանվազ, հանճարափայլ, կարմրածուփ, ինքնարարիչ, տխրահանդես, Դոլի. Շիրազի՝ աստղացիր, գինեխենթ, կարապնավիզ, կանթեղվել, մայրագովք, մայրաժպիտ, սրտափուլզ, իսկ ապա նաև՝ Պ. Սևակի՝ սիրադուլ, բառադուլ, ամենահայ, արբունքահաս, ինքնահոլով, Դ. Սահյանի՝ հայաստանոտ, երկնաթաթախ, ծաղկաշշուկ, փոփոխ տալ և այլ բազմաթիվ հեղինակային-անհատական նորակազմություններ: Բառերի այս խումբը, որ ավելի հաջող կազմություններ են և

ուներն ընդհանրաճանաչ միտումներ համարվում են այսպես կոչված ներուժունակ (պոտենցիալ) բառեր:

Բառապաշարի այս շարքում առանձնանում են որոշակի բառեր, որոնք ստեղծվում են հեղինակային խոսքի անմիջական կամ ինչ-ինչ հանգամանքների թելադրանքով խոսքային տվյալ իրավիճակում, ուստի և նշված բառերը կարելի է անվանել համատեքստային կամ իրավիճակային նորակազմություններ: Լեզվաբանական գրականության մեջ դրանք հայտնի են դիպվածային (օկազիոնալ) բառեր անվանումով: Այս կարգի նորակազմությունները, որ գործ են ածվում բանավոր-խոսակցական լեզվում, հրապարակախոսության մեջ, գեղարվեստական ոճում և հատկապես մամուլում, հաճախ կարող են նույնիսկ մեկանգամյա գործածություն ունենալ խոսքային տվյալ միջավայրում, իսկ հետագայում ընդհանրապես դուրս մնալ բառապաշարի ոլորտից: Այս առումով էլ դրանք պատեհային, դիպվածային կազմություններ են:

Դիպվածային բառերը բնութագրվում են մի շարք տարբերակիչ հատկանիշներով: Նախ՝ սրանք պատկանում են ոչ թե լեզվի, այլ խոսքային ոլորտին, դրանք ստեղծվում են խոսքի տվյալ պահին, խոսքային տվյալ իրավիճակում և առաջին հայացքից տվյալ համատեքստում ոչ սովորական բառային կիրառություններ են, ապա՝ դրանք զուտ անհատական, հեղինակային են և հիմնականում կազմվում են նմանողության (անալոգիայի) հիման վրա, ինչպես՝ ովություն, ցրտերեն, լեզվասպան, տերյանոտ, ձկնուհի, իսկ ապա նաև՝ սեղանիկացավ, տոկոսախեղդ, անդրանիկվել, դանթեանալ, հեթանոսվել, մահանջատիրություն, փողագործություն և այլն:

Ե. Չարենցն իր ժամանակին ստեղծել էր նաև «շամբշտաշուրթ» նորակազմությունը, որը չնայած տեսանելի, բնութագրող ու համոզիչ էր դարձնում պազշտ ու ցանկասեր թագուհու՝ Շամիրամի կերպարը, բայց այն հետագայում լայն կիրառություն չստացավ (բացառությամբ Դ. Շիրազի մեկ գործածության):

Վերջին տարիներին հասարակական, քաղաքական, գիտատեխնիկական ոլորտներում կատարված փոփոխությունների հետևանքով բառապաշարը հարստացավ նաև բազմաթիվ նորագույն հապավումներով, որոնցից շատերը դեռևս բառային, ինքնուրույն կիրառություն չուներ, բայց միտում ունեն ամրագրվելու գրական լեզվի բառապաշարում, ինչպես՝ ԴՅԾ, ԱԻՄ, ՍԻՄ, ԱԺ, ԱՊՅ, ջրտնտ, տնտիաշվարկ և այլն:

Բառապաշարի հարստացման միջոցներից մեկը հնացած, արդեն իսկ կիրառությունից դուրս եկած բառերի նոր իմաստներով գործածությունն է (նախարար, սպարապետ, մարզպետ և այլն):

Գրական լեզվի բառապաշարի զարգացման նշված միտումներն ու ուղիները շարունակական, անընդհատ գործընթաց են և հետագայում ևս նպաստելու են մեր լեզվի բառային կազմի հարստացմանն ու կատարելագործմանը: